

ՊՐՈԼԻՏՈՎԱՐՆԵՐ ԲՈՒՐՍ ՀԵՐԿԻՇՆԵՐԻ, ՄԻԱՑԵՐ

90.

ՊԱՏՄԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Հ Ա Յ Ա Խ Ս Հ Բ Ա 8 • 1 9 3 6

|               |  |
|---------------|--|
| <u>90</u>     | <u>120</u>                                 |
| <u>π-30</u>   | <u>Дүйнікүнүн 9-н<br/>шарынын бүлекини</u> |
| <u>1936р.</u> | <u>404</u>                                 |
| —             | —  |

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ՝ բոլոր յերկիրների, միացե՛ք

ՅԵՐԱԿԱՆ - 13

ԽՍՀՄ ԳԱՅԻ Հ 1881 թ.

ՊԱՏՄԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՉՈՒՄ  
ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

A II/X/018



ՀԱՅԿԱՆԱԿԱԴՐԱՄ • 1936

НА ФРОНТЕ  
ИСТОРИЧЕСКОЙ  
НАУКИ

Армпартиздат. Эривань

## ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ ՑԵՎ ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺԿԽ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պատմաւրյան վերաբերյալ արդեն գրված դասագրքերը վերանայելու յեզ բարելավելու, իսկ անհրաժեշտ դեպքերում նայեք վերափոխելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Ժդանով (նախագահ), Թագեզ, Սվաճիձե, Դարին, Լուկին, Յակովիկ, Բիստրյանսկի, Զատոնսկի, Ֆայզուլլա Խաջայեք, Բառումտեն, Բուլբնով յեզ Բուխարին:

Հանձնաժողովին իրավունք վերապահել կազմակերպելու խթմակներ առանձին դասագրքերը վերանայելու, ինչպես նայեք մրցանակարաշխուրյուն հայտարարելու՝ արմատական փափոխման յենքակա հանաչվող դասագրքերի փոխարեն նոր դասագրքեր կազմելու համար:

Առաջին հերթին պետք է վերանայվեն  
ԽՍՀՄ պատմության տարրական դասընթացի  
և նոր պատմության դասագրերը:

ԽՍՀՄ ժողովում նաև նախագահ՝  
Վ. ՍՈԼՈՏԾՈՎ  
Համերը կենտկոմի քարտուղար՝  
Ի. ՍՏԱԼԻՆ

26 հունվարի 1936 թ.

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՃՈՒՄ ՑԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Կարեոր նշանակություն տալով ԽՍՀՄ  
դպրոցներում քաղաքացիական պատմու-  
թյան գասավանդման պատշաճ դրվածքին,  
ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսար-  
ների Խորհուրդը և Համկ(բ)Կ կենտրոնա-  
կան կոմիտեն դեռ 1934 թվականի մայիսի  
սի 16-ին ընդունեցին և հրապարակեցին  
«ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական  
պատմության գասավանդման մասին» հայտ-  
նի վորոշումը։ Այդ վորոշման մեջ ժողկու-  
խորհը և Համկ(բ)Կ կենտկոմը հավաստեցին  
պատմության գասավանդման անբավարար  
դրվածքը ԽՍՀՄ դպրոցներում։ Ժողկոմխոր-  
հը և Համկ(բ)Կ կենտկոմն արձանագրեցին,

վոր պատմության դասագրքերի և իր իսկ  
դասավանդման գլխավոր թերությունը  
նրանց վերացական սխեմատիկ բնույթն ե.  
«Փօխանակ բաղաբացիական պատմությունը  
կենդանի, գրավիչ ձևով դասավանդելու, ռու-  
րադրելով համեռազույն անցքերն ու փաս-  
տերը ժամանակագրական հաջորդականությամբ  
և բնութագրելով պատմական գարձիչներին —  
աւսկերեներին տալիս են հասարակական-  
սենատական ֆորմացիաների վերացական բնո-  
րությունները և այսպիսով բաղաբացիական  
պատմության կապակցված ռուրադրումը նեն-  
գափոխում են վերացական սոցիոլոգիական  
սխեմայօվ» (ԽՍՀՄ Ժողկությունի և Համ-  
կ(ր)կ Կենտկոմի 1934 թվականի մայիսի  
16-ի վորոշումից):

Ժողկությունը և Կենտկոմը նշեցին, վոր  
«Աւակերտների կողմից պատմության դասընթա-  
ցը հաստատվել յուրացնելու վեռական պայ-  
մանն ե պատմական անցքերի պատմական-  
ժամանակագրական հաջորդականության պահ-  
պանաւմը, աւակերտների հիւղության մեջ  
անպայման ամրացնելով պատմական կարեռ-

յերեւայիները, պատմական գործիչներին, ժամանակագրական տարերվերը։ Միայն պատմության այսպիսի դասընթացը կարող է ապահովել պատմական նյութի՝ տօնակերտների համար անհրաժեշտ մաշտիխարյանը, դիտողականությանը ու կոնկրետությունը, վորի հիման վրա միայն հնարակը և նիւթ վերլուծել և նիւթ բնդիանուացումների յենքարեկել պատմական այն անցքերը, վորոնք առաջնային մուսեցնում են պատմության մարքսիստական ըմբռնմանը։

Սրա համապատասխան վարոշված եր մինչև 1935 թվականի հունիսը պատրաստել պատմության նոր դասագրքեր։

- ա) հին աշխարհի պատմություն,
- բ) միջին դարերի պատմություն,
- գ) նոր պատմություն,
- դ) ԽՍՀՄ պատմություն,
- ե) կախյալ և դադութային յերկիրների նոր պատմություն։

Ժողկոմիսորել և Համ Կ(բ)կ Կենտկոմը վորոշել եյին նոր դասագրքեր կազմելու համար ստեղծել հինգ խմբակ և հաստատել

եյին այդ խմբակների անձնական կազմը:

1934 թվականի հունիսի 9-ին Համեր(բ)կ Կենտկոմը և ԽՍՀ Միության Ժողկոմխորհը լուծեցին տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում ԽՍՀՄ պատմության տարրական դասընթաց մացնելու հարցը, և կազմակերպվեցին ԽՍՀՄ պատմության տարրական դասագրքեր կազմող խմբակներ:

1934 թվականի ողոստոսի 14-ին Համ. Կ(բ)կ Կենտկոմը և ԽՍՀ Միության Ժողկոմխորհը հավանություն տվին ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի ներկայացրած դիտողություններին՝ «ԽՍՀՄ պատմության» և «նոր պատմության» նոր դասագրքերի կոնսուլեկտների վերաբերյալ»

Այդ դիտողությունների մեջ հանգամանորեն քննության եյին առնված և խիստ քննադատության յենթարկված յերկու կոնսուլեկտներն ել, ընդվորում, ինչպես արձանագրված եր, առանձնապես անբավարար եր կազմված ԽՍՀՄ պատմության կոնսուլեկտը, վորը լի յեր մեծ թվով վոչ դիտական և մարգսիզմի տեսակետից անդրագետ 8

բնորոշումներով, տառապում եր ծայրահեղ  
թափիթփածությամբ, վորն առանձնապես  
անթույլատրելի յե տիտիսի «դասագիրք  
ստեղծելիս, վորտեղ պետք և կշռադատված  
լինի յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր  
բնորոշումը»: Խոշոր, թե՛ս ավելի պակաս  
թերություններով, տառապում եր նաև «նոր  
պատմության» դասագրքի կոնսովեկտը:

Ընկերներ Ստալինի, Կիբովի և Ժղանովի  
գիտողություններն սպառիչ կերպով նշում  
եցին, թե ինչ ուղղությամբ եր անհրաժեշտ  
վերամշակել կոնսովեկտներն ու պատրաստ-  
վող դասագրքերը: Ստկայն ԽՍՀՄ ժողկոմ-  
խորհը և Համկ(ր)ի կենակոմը հարկադրված  
են հավաստիու, վոր ներկայումս Ժողկոմ-  
խորհի ու կենակոմի քննությանը ներկայաց-  
ված պատմության դասագրքերը մեծ մա-  
սամբ անբավարար են և դեռևս տառապում  
են նույն թերություններով, վոր նշված են  
վերև: Առանձնադիտես անբավարար և կազմ-  
ված «ԽՍՀՄ պատմության» դասագիրքը  
վոր ներկայացրել և ոլքով. Վանագի խմբա-  
կը ինչովես նաև անբավարար են տարբա-

կան դպրոցի համար կազմված ԽՍՀՄ պատմության տարրական դասընթացի դասագրքը՝ վոր ներկայացրել են Մինցի և Լոգինովու խմբակները:

Այն հանդամանքը, վոր մասնանշված դասագրքերի հեղինակները չարունակում են ովնդիլ կուսակցության կողմից բազմիցս արդեն յերեան բերքած ու բացահայտութեն սնանկ պատմական բնորոշությունների և դրույթների վրա, վորոնց հիմքն են կազմում Պոկրովսկու հայտնի սխալները, Ժողկոմինորհը և Կենտկոմը չեն կարող չգնահատել վորպես վկայություն այն բանի, վոր մեր պատմաբանների, առանձնապես ԽՍՀՄ պատմության պատմաբանների վորոշ մասի մեջ, արժանացել են հակամարքսիստական, հակալինինյան, ըստ եյության լիլիլիդատորական, հակագիտական հայացքներ պատմական գիտության նկատմամբ։ Ժողկոմինորհը և Համեկ(ը)կ Կենտկոմն ընդգծում են, վոր պատմությունը վորպես զիտություն լիկվիդացիայի յենթարկելու այդ վնասակար աենդենցներն ու փորձերը կտպված են առաջին

հերթին մեր վորոշ ոլատմաբանների մեջ  
պատմական սխալ հայացքներ տարածվելու  
հետ, վորոնք հատուկ են այսպես կոչված  
«Պոկրովսկու պատմական գլուխին»։ Ժող-  
կոմիսորնը և Համկ(ը)կ Կենտկոմը մասնա-  
նշում են, վոր այս վնասակար հայացքների  
հաղթահարման խնդիրն անհրաժեշտ նախա-  
դրյալ և հանդիսանում ինչպես պատմության  
դասագրքեր կազմելու, այնպես և մարքսիս-  
տական-լենինյան ոլատմական դիտության  
զարգացման ու ԽՍՀՄ-ում պատմական կըր-  
թության վերելքի համար, վորոնք կարեա-  
րակույն նշանակություն ունի մեր պետու-  
թյան ու մեր կուսակցության գործի և ա-  
ճող սերնդի ռւսուցման համար։

Սրա համապատասխան ԽՍՀ Միության  
Ժողկոմիսորնը և Համկ(ը)կ Կենտկոմը վորո-  
շեցին պատմության արդեն գրված դասագրը-  
քերը վերանայելու և արմատապես բարելա-  
վելու, իսկ անհրաժեշտության վեպքում նաև  
վերափոխելու համար ստեղծել Ժողկոմիսոր-  
նի և Համկ(ը)կ Կենտկոմի հանձնաժողով,  
կազմված ընկերներ Ժզանովից (նախագահ),

Ռադեկից, Սվանիձեյից, Գորինից, Լուկինից,  
Յակովիլիվից, Բիստրյանսկուց, Զատոնսկուց,  
Ֆայզուլլա Խոջայևից, Բառմանից, Բուբ-  
նովից և Բուխարինից։ Այդ հանձնաժողովին  
իրավունք և վերապահված խմբակներ կաղ-  
մակերպել՝ տռանձին դասագրքերը վերա-  
նայելու համար, ինչպես նաև հանձնաժողո-  
վի կողմից արմատական վերափոխման յեն-  
թակա ճանաչված դասագրքերի փոխարեն  
նոր դասագրքեր գրելու կոնկուրս հայտա-  
բարել։

Ժողկոմիսոբհը և Կենտկոմը վարոշեցին նաև  
հրապարակել մամուլում ընկերներ Ստալի-  
նի, Կիբովի ու Ժդանովի դիտողությունները  
և այլ նյութեր այս հարցի վերաբերյալ։

ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԽՍՀՄ ՊԱՏՄՈՒ-  
ԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐՅԻ ԿՈՆՍՊԵԿՏԻ  
ԱՌԹԻՎ

Վանագի խմբակը չի կատարել առաջա-  
դրանքը և նույնիսկ չի ըմբռնել բուն առա-  
ջադրանքը։ Նա կազմել է ուռւաց պատմու-  
թյան, և վոչ թե ԽՍՀՄ պատմության կոնս-  
ոլեկտ, — այսինքն՝ Ռուսիայի պատմության  
կոնսոլեկտ, բայց առանց այն ժողովուրդների  
պատմության, վորոնք մտել են ԽՍՀՄ կազ-  
մի մեջ (հաշվի չեն առնված Ռւկրաինայի,  
Բելոռուսիայի, Ֆինլանդիայի և Մերձբալ-  
թյան այլ ժողովուրդների, Հյուսիսային-կով-  
կառյան ու Անդրկովկասյան ժողովուրդնե-  
րի, Միջին Ասիայի և Հեռավոր Արևելքի ժո-  
ղովուրդների, ինչպես նաև Վոլգայի և Հյու-

սիսային ժողովուրդների — թաթարների, բաշ-  
կերների, մորդիերի, չուվաշների և այլն  
պատմության ավյաները):

Կոնսոլեկտի մեջ չի ընդգծված ոռւսական ցա-  
րիւմի աննեկսիոնիստական — զաղութացման  
դերը՝ ոռւսական բուրժուազիայի ու կարկա-  
ծատերերի հետ միասին («ցարիկմը ժողո-  
վուրդների բանու ե»):

Կոնսոլեկտի մեջ չի ընդգծված ոռւսական  
ցարիկմի հականեղափոխական դերն արտա-  
քին քաղաքականության մեջ, ոկտած Ցեկա-  
տերինա Արդի ժամանակներից մինչև 19-րդ  
դարի 50-ական թվականները և նրանից հե-  
տո («ցարիկմը, վորպես միջազգային ժամա-  
դարմ»):

Կոնսոլեկտի մեջ մի կույտի յեն վերած-  
ված ֆեոդալիզմը և նախաֆեոդալական ժա-  
մանակաշրջանը, յերբ դյուքացիները ղեռ  
ճորտացված չելին. պետության միահեծան  
հասարակակարգը և ֆեոդալական հասարա-  
կակարգը, յերբ Ռուսաստանը մանրատված եր-  
բաղմաթիվ ինքնուրույն կեսարկետություն-  
ների:

Կոնսպեկտի մեջ մի կույտի յին վերածված ռեակցիա և հականեղափոխություն, հեղափոխություն «առհասարակ», բուրժուական հեղախություն և բուրժուադեմոկրատական հեղափոխություն հասկացողությունները:

Կոնսպեկտում չին արված Ռուսաստանի՝ ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների ազգային ազատագրական շարժման պայմաններն ու ակունքները և ազգպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորպես այդ ժողովուրդներին ազգային ճնշումից ազատող հեղափոխություն մնում և չպատճառաբանված, ինչպես վոր չպատճառաբանված և մնում նաև ԽՍՀ Միության ստեղծումը:

Կոնսպեկտի մեջ առաջընեն կան ամեն անսակի մաշված արաֆարետային քնորոշումներ, ինչպես «Նիկոլայ առաջինի վաստիկանական տեսող», «ռազինականություն», «պուգաչևիկանություն», «կալվածատիրական հականեղափոխության հարձակումը 19-րդ դարի 70-ական թվականներին», «ար-

կյունաբերական հեղաշրջման առաջին քայլերը», «ցարիզմի և բուժուազիայի առաջին քայլերը 905-907 թվականների հեղափոխության դեմ պայքարելիս» և այլն։ Կոնսպեկտի հեղինակները կուրորեն պատճենահանում են ամեն տեսակի բուրժուական-պատմաբանների մաշված ու միանգամայն վոչգիտական բնորոշումները, մոռանալով, վորիրենք պարտավոր են մեր յերիտասարդությանն ուսուցանել մարքսիստական, զիտականորեն հիմնավորված բնորոշումներ։

Կոնսպեկտը չի արտացոլում արևմտայեվրոպական բուրժուական-հեղափոխական ու սոցիալիստական շարժումների դերն ու ազդեցությունը Ռուսաստանի բուրժուական հեղափոխական շարժման և պրոլետարական սոցիալիստական շարժման կազմավորման վրա։ Կոնսպեկտի հեղինակներն ըստ յերեսութին մոռացել են, վոր ուսւ հեղափոխականներն իրենց համարում ենին Արևմուտքի բուրժուական-հեղափոխական ու մարքսիստական մտքի հայտնի կորիֆեյների աշակերտներն ու հետեւորդները։

~~2569~~ 100  
A/2018

Կոնսոլեկտի մեջ հաշվի չեն առնված առաջին իմպերիալիստական պատերազմի արմատները և ցարիզմի դերն այդ պատերազմում՝ իրեն ռեզերվ արևմտա-յեվրոպական իմպերիալիստական պետությունների համար, ինչպես նաև հաշվի չի առնված, ինչպես ոռւսական ցարիզմի, այնպես ել ոռւսական կապիտալիզմի կախյալ դերը արևմտա-յեվրոպական կապիտալիզմ, վորի հետեանքով Հռկությունը, վորպես Ռուսաստանը կիսագաղութային վիճակից ազատագրողի, մնում և չըպատճառաբանված:

Կոնսոլեկտի մեջ հաշվի չի առնված համայնքրոպական քաղաքական ձգնաժամի առևկայությունը համաշխարհային պատերազմի նախորյակին, վորն ի միջի այլոց արտահայտվեց բուրժուական դեմոկրատիայի և պառամենտարիզմի անկման մեջ, վորի հետեանքով խորհուրդների նշանակությունը համաշխարհային պատմության տեսակետից, վորպես պըռուետարական դեմոկրատիայի կըրողների և բանվորներին ու գյուղացիներին

կառիտաւլիզմից ազատագրող որդաններ, մը  
նուռ և չպատճռաբարնված:

Կոնսոլիկտի մեջ հաշվի չի առնված հոսանք-  
ների պայքարը ԽՍՀՄ կառավարող կոմու-  
նիստական կուսակցության ներսում և պայ-  
քարը տրոցկիզմի դեմ, վորակես մանր բուր-  
ժուական հակահեղափոխության արտա-  
հայության:

Յեվ այն և այն:

Առհասարակ պետք և ասել վոր կոնս-  
ոլեկտը կազմված և ծայրահեղորեն թափթլվ-  
ված և մարքսիզմի տեսակետից վոչ բոլո-  
րովին զրագետ:

Մենք ել չենք խոսում կոնսոլիկտի վոչ  
ճշգրիտ վոճի և այնպեսի «քառախաղի» մա-  
սին, յերբ Կեղծ-Դմիտրին կոչված և Դմի-  
տրի «Անվանյալ», կամ ինչպես «հին ֆեոդալ-  
ների հաղթանակը 18-րդ դարում» (հայտնի  
չե սակայն, թե ուր կորան և ինչպես եյն  
պահում իրենց «նոր» ֆեոդալները, յեթե  
նրանք առհասարակ դոյլություն ունեցել են  
այդ ժամանակ) և այլն:

Մենք անհրաժեշտ ենք համարում արմա-

տուպես վերամշակել կօնսովեկաւը վերև շաբադը վագոնի դրույթների վոդով, ընդվորում պետք են հաշվի առնվի, վոր խոսքը վերաբերում է դաստիքի ստեղծման, վորի մեջ պետք են կշռադատված մինի յուրաքանչյուր բառ և յուրաքանչյուր բնորոշում, և վոչ թե անպատճախանատու ժուռնալային հողվածների, վորտեղ կարելի յե ամեն ինչի մասին ուղածի ովես շազակրատել հեռու մնալով պատճախանատվության զգացմունքից:

Մեղ հարկավոր և ԽՍՀՄ պատմության այնպիսի գասագիրք, վորտեղ վելիկուուսիայի պատմությունը չանջատվի ԽՍՀՄ մյուս ժողովարդների պատմությունից — այս տռաջին, և վորտեղ ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունը չանջատվի համայելքովական պատմությունից — և առհասարակ համաշխարհային պատմությունից — այս յերկրորդ:

Ի. Ստալին

Ա. Ժդանով

Ս. Կիրով

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՆՈՐ ՊԱՏՄՈՒ-  
ԹՅԱՆ» ԴԱՍՏԳՐԱԲԻ ԿՈՆՍՊՈԵԿՏԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,

Վորովինեան նոր պատմությունն ամենաշահարուստն ե բովանդակությամբ, գերհագեցված և իրադարձություններով, ինչպես նաև նկատի ունենալով, վոր բուքժուական յերկիրների նոր պատմության մեջ ամենազլիսավորը, յեթե նկատի ունենանք մինչհոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանը Ռուսաստանում, այդ ֆրանսական հեղափոխության հաղթանակն ե և կապիտալիզմի հաստատումը Ցեղոպայում ու Ամերիկայում,—գտնում ենք, վոր ավելի լավ կլիներ, յեթե նոր պատմության դասագիրքն սկսվեր ֆրանսական հեղափոխության վերաբերյալ

գլխով։ Նախորդող անցքերի հետ կապ ստեղծելու համար կարելի յեր տալ մի փոքր ներածություն՝ նիդերլանդական ու անգլիական հեղափոխությունների հիմնական անցքերի համառոտ շորադրանքով, նիդերլանդական ու անգլիական հեղափոխությունների անցքերի մանրամասն շորադրանքը տալով միջին դարերի պատմության դասագրքի վերջում։

Նշանակում ե, մենք առաջարկում ենք կոնսֆեկտից դուքս դցել առաջին մասը (վեց դմուխ), այսինքն՝ ամբողջ առաջին բաժինը, փոխարինելով այն համառոտ ներածականով։

Կոնսագեկտի գլխավոր թերությունը համարում ենք այն հանդամանքը, վոր նա բավականաչափ խիստ չի ընդդում ֆրանսական հեղափոխության (բուրժուական հեղափոխության) և Ռուսաստանի Հռկանիքերյան հեղափոխության (սոցիալիստական հեղափոխության) միջև յեղած տարբերության և հակագրության վորդ խորությունը։ Նոր պատմության դասագրքի հիմնական

առանցքը պետք եւ լինի հենց այս հակա-  
գրության գաղափարը բուժուական հեղա-  
փոխության և սոցիալիստական հեղափոխու-  
թյան միջև ծույց տար վոր ֆրանսական  
(և ամեն մի այլ) բուժուական հեղափոխ-  
ություն ժողովրդին ազատելով ֆեոդա-  
լիզմի ու արսոլուտիզմի շղթաներից՝ նոր  
շղթաներ և դրեւ նրա վրա—կապիտալիզմի  
ու բուժուական դեմոկրատիայի շղթաները,  
մինչդեռ Ռուսաստանի սոցիալիստական հե-  
ղափոխությունը ջախջախեց բոլոր ու ամեն  
տեսակի շղթաները և ժողովրդին ազատեց  
ամեն ձեր շահագործումից—ահա թէ վորը  
պետք եւ լինի նոր պատմության դասագրքի  
կարմիր թելը:

Ուստի և չի կարելի թույլ տալ վոր ֆրան-  
սական հեղափոխությունն անվանեն պար-  
զապես «միծ»։ այն պետք եւ անվանել ու  
մեկնաբանել վորպես բուժուական հեղա-  
փոխություն։

Ճիշտ այդպես ել չի կարելի Ռուսաստանի  
մեր սոցիալիստական հեղափոխությունն  
անվանել պարզապես Հոկտեմբերյան հեղա-

փոխություն — այն հարկավոր և անվանելու մեկնաբանել վորպես սոցիալիստական հեղափոխություն, խորեգդային հեղափոխություն:

Սրա համապատասխան հարկավոր և վերակառուցել նոր պատմության դասագրքի կոնսոլեկտը, ընտրելով համապատասխան նորոշումներ ու տերմիններ:

Կոնսոլեկտի մեջ նոր պատմության բաժնումը յերկու մասի մենք գտնում ենք քիչ պատճառաբանված ու պատճական, կատարված ինչ վոր մի անհասկանալի հատկանիւով։ Մենք նպատականարմար կդանեցինք՝ որ պատմությունը բաժանել յերեք մասի։

Առաջին մաս — Գրանսական բուրժուական հեղափոխությունից մինչև Գրանսալրուսական ոլատերազմն ու Փարիզի կոմունան (բացառյալ)։ Այդ կլինի առաջակըռը յերկիրներում կադիտալիզմի հաղթանակի և հաստատման ժամանակաշրջան։

Եերկրորդ մաս — Գրանսալրուսական պատերազմից ու Փարիզի կոմունայից մինչև

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթաշնորհը միուսաստանում և իմպերիալիստական պատերազմի ավարտումը (ներառյալ): Այդ կը ինի կապիտալիզմի սկզբող անկման, Փարիզյան կոմունայի կողմից կապիտալիզմին հասցված տառջին հարգածին, հին «ազատ» կապիտալիզմն իմպերիալիզմի վերաճելու և Հոկտեմբերյան հեղափոխության ուժեղության առաջընթացի կապիտալիզմը տապալելու ժամանակաշրջան, հեղափոխություն, վորը նոր գարտզլուխ բաց աշեց մարդկության պատմության մեջ:

Յերրորդ մաս — 1918 թվականի վերջից (պատերազմի ավարտման տարին) մինչև 1934 թվականի վերջը: Դա մի կողմից կը ինի առ յերկիրներում հետպատերազմյուն քաղաքական ճգնաժամի ժամանակաշրջան, Փարիզի և գաղութների ու ազգեցության շրջանների համար մղվող պայքարի ուժեղացման և մյուս կողմից՝ ԽՍՀՄ բազաքացիական կախվերի ու ինտերվենցիայի ժամանակաշրջան, առաջին հնդամյակի և յերկորդ հնդամյակի սկզբի ժամանակաշրջան:

ԽՍՀՄ-ում, մեր յերկըում սոցիալիզմի հաղթական շինարարության ժամանակաշրջան, կապիտալիզմի վերջին մնացորդներն արմատախիլ անելու ժամանակաշրջան, ԽՍՀՄ-ում սոցիալիստական ինովուստրիացի հաղթանակի ու վերելքի, գյուղում սոցիալիզմի հաղթանակի, կոլտնտեսությունների ու խորհանութեառությունների հաղթանակի ժամակաշրջան։ Մենք միծ սխալ ենք համարում այս, վոր կոնսոլեկտի հեղինակները 1923 թվականի վրա ընդհատում են պատմությունը։ Այս սխալը պետք է ուղղել պատմությունը հասցնելով մինչև 1934 թվականը։ Դրա համապատասխան հարկ կլինի կտտարել նյութի, բաժինների ու զլուխների վերափոխում ու վերաբաշխում։

Լավ կլիներ կոնսոլեկան աղատել հին, մաշված արտահայտություններից, ինչպես որինակ՝ «հին կարգ», «նոր կարգ» և այլն։ Ավելի լավ կլիներ դրանք փոխարինել «մինչեապիտակիստական կարգ», կամ ավելի լավ և «արսովութիստական» փեղարական կարգ» բառերով, իսկ «նոր կարգի» փոխարին ասել

«կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի կարգ»։ Այսպիսի վովովառթյան դեպքում այսպիս կոչված «նոր կարգը», այսինքն՝ կապիտալիստական կարգը, արդեն հանդես կդա վորպիս նին կարգ ԽՍՀՄ խորհրդային կարգի համեմատությամբ, վորը մարդկային հասարակության կառուցվածքի բարձրագույն տիպն և ներկայացնում։

Լավ կլիներ նաև կոնսոլիտն աղատել «եպոխաների» չափից դուրս առատությունից։ «Կոնսոլականության եպոխա», «Նապոլեոնի եպոխա», «Պիլեկտորիայի եպոխա» — արդյո՞ք չափազանց շատ չեն եպոխաները։

Մեզ նմանապիս սխալ և թվում այն, վորգակութային հարցին կոնսոլիտի մեջ անհամաշափ քիչ տեղ և տրված։ Այն ժամանակ, յերբ Ժորժ Զանդերին, Շալենվլերներին, Կիալինդներին և ուրիշներին բավականաչափ շատ ուշադրություն և հատկացված, գաղութային հարցին և դրությանն այնպիսի մի պիտության մեջ, ինչպիս ասենք

Զինաստանը, քիչ ուշադրություն և նվիրված:

Լավ կլիներ նաև «Գերմանիայի և Իտալիայի միավորում» Փորմուլն փոխարինել «Գերմանիայի և Իտալիայի վերամիացումն ինքնուրույն պետությունների մեջ» Փորմուլայով։ Այլապես կարող եւ այնպիսի տպավորություն ստացվել վոր խոսքը վերաբերում եւ վոչ թե անցյալում բաժան-բաժան յեղած այնպիսի պետությունների վերամիացման համար պայքարելուն, ինչպիս Գերմանիան ու Իտալիան, այլ այդ պետությունները մի պետության մեջ միավորելուն։

Ընդհանուր առմամբ նոր պատմության կոնսպեկտը, մեր կարծիքով, կազմված և ավելի խելացի կերպով, քան ԽՍՀՄ պատմության կոնսպեկտը, բայց այս կոնսպեկտի մեջ, այսուամենայնիվ բավականին շատ շփոթ կա։

Ի. ՍՏԱԼԻՆ

Ս. ԿԻՐՈՎ

Ա. ԺԴԱՆՈՎ

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

1934 թվականի մայսի 16-ին ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը և Համկ(բ)կ Կենտրոնական Կոմիտեն վարչում ընդունեցին ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմություն դասավանդելու մասին։ Այս վորոշման մեջ քննադատության եր յինթարկվում կարեռագույն անցքերն ու գիտուերն իրենց ժամանակագրական հաջորդականությամբ շարադրելու և պատմական գործիչների ընութագրման միջոցով կրնկըետ պատմությունը տալու փոխարեն, հասարակական-տնտեսական ֆորմացիաների վերացուկան բնորոշումների դասավանդումը մեր դպրոցներում։ Հին աշ-

խարհի, միջին դարերի պատմության, նոր պատմության, ԽՍՀՄ պատմության և կախյալ ու դադութային յերկիրների նոր պատմության դասագրքեր ստեղծելու համար ԽՍՀՄ Ժողկոմիսորհը և Համկ(ը)կ Կենտկոմը ստեղծեցին Տիգրակ, Վորոնք պետք եմինչև 1935 թվականի հունիս ամիսը կատարեցին իրենց աշխատանքը:

Համկ(ը)կ Կենտկոմը չսահմանափակվեց նոր դասագրքերի ընույթը վորոշելով և նրանց պատվիրը տալով։ Նու պատմաբանների համապատասխան խմբերից պահանջեց ներկայացնել դասագրքերի կոնսոլիտները և մի շաբաթ այդպիսի կոնսոլիտներ մանրազնին քննադատության յենթարկեց։ ԽՍՀՄ պատմության և նոր պատմության դասագրքերի կոնսոլիտների առթիվ ընկերներ Ստալինի, Իլյովի և Ժդանովի ստորև տպագրվող դիտողությունների մեջ (1934 թվականի ոգոստոսի 8-ի և 9-ի) Կենտկոմը քննադատության յենթարկելով կոնսոլիտները, ճշգրիտ ցուցումներ տվեց պատմաբան-

ներին՝ նըանց առջև կանգնած ինպիրների  
վերաբերյալ:

ԽՍՀՄ պատմության վերաբերյալ նա  
մատնանշեց, նախ՝ այս պատմությունն ընդ-  
հանուր պատմության շրջանակներում մեկ-  
նաբանելու անհրաժեշտությունը, առանձ-  
նապես նշելով արևմտաշենքրապական բուք-  
ժուական-հեղափոխական ու սոցիալիստա-  
կան շաբժումների դերն ու ազդեցությունը  
Ռուսաստանի բուքժուական-հեղափոխա-  
կան շաբժման և պրոլետարական-սոցիա-  
լիստական շաբժման նկատմամբ։ Յերկրորդ,  
Կենտկոմը պահանջեց պատմաբաններից,  
վոր նրանք տան վոչ թե սուսաց պատ-  
մության դասագրքեր, այլ ԽՍՀՄ պատմու-  
թյան, այսինքն ԽՍՀՄ կազմի մնջ մանող  
բոլոր ժողովուրդների անցյալի պատմու-  
թյան դասագրքեր։ Ինչ վերաբերում ե ցա-  
րական Ռուսաստանի պատմությանը, Կենտ-  
կոմը պահանջեց արտացոլել ցարիզմի դերը,  
վորպես ժողովուրդների բանտի և վորպես  
միջազգային ժանդարմի։

Նոր պատմության դասագիրք կտպմելու

վերաբերյալ ցուցումների մեջ կենտկոմն  
առաջադրեց պատմության այնպիսի պերիո-  
դիզացիա, վորը տարրեր և բուրժուական  
դասագրքերում ընդունվածից, այսինքն այն-  
պիսին, վորը հենվում և տնտեսական զար-  
գացման հիմնական վուլերի վրա։ Նոր պատ-  
մությունը պետք է լինի կապիտալիզմի հաղ-  
թանակի և նրա կործանման սկզբի պատ-  
մություն։ Նա սկսվում և ֆրանսական հե-  
ղափոխությունից, վորն առաջին անգամ  
մեծ յերկրում հաստատեց բուրժուագիայի  
իշխանությունը, և Անգլիայի արդյունաբե-  
րական հեղաշրջումնից, վորը հիմնական տըն-  
տեսական լծակներ ստեղծեց բուրժուագիա-  
յի տիրապետության համար իդեալ ժամա-  
նակակից արդյունաբերության։ Նոր պատ-  
մությունը կենտկոմը բաժանեց յերեք շրր-  
ջանի, — 1. ֆրանսական հեղափոխությու-  
նից մինչև ֆրանս-սկըռուսական պատերազմը,  
այսինքն աղգային պատերազմների ու հեղա-  
փոխությունների միջոցով զեկավար կապի-  
տալիստական պետությունների վերջնական  
ձևավորման ժամանակաշրջանը, 2. ֆրանս-

պրուսական պատերազմից մինչև 1914—1918  
թվականների համաշխարհային պատերազմը,  
այսինքն՝ արդյունաբերական կապիտալիզ-  
մից մռնողութիստականին անցնելու, իմպե-  
րիալիզմի ծագման և առաջին համաշխար-  
հային իմպերիալիստական պատերազմի ժա-  
մանակաշրջանը, պատերազմ, վորը ծնեց  
առաջին սոցիալիստական հեղափոխությունը,  
3. յերրորդ շրջան Հոկտեմբերյան սոցիալիս-  
տական հեղափոխությունից մինչև այսոր,  
այսինքն կապիտալիզմի վլուզման սկզբան-  
վորության և աշխարհը սոցիալիստական ու  
կապիտալիստական սիստեմների պառակտ-  
վելու ժամանակաշրջան։

Վորագես ամբողջ նոր պատմության հիմ-  
նական առանցք, կենակոմը մատնանշեց  
բուրժուական ու սոցիալիստական հեղափո-  
խությունների միջև յեղած հակառակությունը։

Բացի այս հիմնական դրույթներից, կու-  
սակցության կենտկոմը պահանջեց հրաժար-  
վել բուրժուական, առաջին հերթին լիբե-  
րալ պատմաբաններից փոխ առնված հնա-  
ցած, վոչ ստույգ բնորոշումներից, բոլոր

դասագրքերում կիրառել մարքոխղմ-լենին  
նիղմի ստույգ, վարոշակի և գիտական հաս-  
կացողությունները, առանց վորի աշակերտ-  
ներին չի կարելի տալ մարդկության զար-  
դացման իրական պատկերը:

Մենք այսովես մանրամասն ենք շարադրում  
ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի  
գիտողությունների գլխավոր բովանդակու-  
թյունը՝ թե մեր յերիտասարդ պատմաբան-  
ներին և թե ամրող խորհրդային հասարա-  
կայնությանը ցույց տալու համար այն  
նշանակությունը, վոր Համե(ր)կ Կենտկոմի  
ընկեր Ստալինի գլխավորությամբ, տալիս և  
պատմական գիտությանն ու նրա դասավանդ-  
մանը: Կուսակցության կենտրոնական կոմի-  
տեն, վորը ղեկավարում է պատմության մեջ  
չտեսնված շինարարություն, նախապատրաս-  
տում և յերկրի պաշտպանությունը, ժամա-  
նակ գտավ ամենալուրջ կերպով զբաղվելու  
պատմության դասագրքերի հարցով, վորով-  
հետև նա Մարքսի, Ենգելսի ու Լենինի նմոն  
պատմության մեջ տեսնում է սոցիալիզմի  
համար մղվող պայքարի հղոր զենքը ԽՍՀՄ

ժողովրդական մասսաները պետք գիտենան  
մարդկության խևական պատմությունը, աշ-  
խատավորության ստրկացման և ազատա-  
գրման պատմությունը, պետք և գիտենան  
թե վրատեղից ենք յեկել և ուր ենք գնում  
մենք, քանի վոր այդ կտասնապատկի բան-  
վորների ու կոլանտեսականների համոզ-  
մունքը սոցիալիզմի անխուսափելի հաղթա-  
նակի նկատմամբ և կտա նրանց այդ հաղ-  
թանակի պայմանների խմացություն։ Նրանք  
պետք և կոնկրետ պատկերացում ստանան  
շահագործող դասակարգերի ուժի աղբյուր-  
ների ու տիրապետության մեջովների մա-  
սին, պատկերացում՝ աշխատավորների ուժի  
աղբյուրների և ազատագրման համար նրանց  
մղած պայքարի մեթոդների մասին։ Նրանք  
պետք և ստանան վոչ թե առաջ յեկող ու  
քայքայվող հատաքական տնտեսական  
ֆորմացիաների անկենդան սխեմա, այլ դա-  
սակարգերի պայքարի կոնկրետ պատկերը՝  
նրանց առաջնորդների բնութագրումով, այդ  
ուղաքարում դասակարգային հարաբերու-  
թյունների կոնկրետ բնութագրումով, վոր-

բովհեակ այդ յիղաճնակով միայն պատմությունը կսովորեցնի նրանց այն, ինչ նրա խնդիրն եւ հանդիսանում իրը զիտություն քաղաքականության մասին, այսինքն՝ իշխանության ու նրա պահպանման համար պայքարելու մասին:

Համկ(բ)կ կենտկոմի ցուցումները լիովին չեն կատալոված: Ներկայացված դասագրքերը մասամբ բոլորովին չեն համապատասխանում այդ սկահանջներին, իսկ մասամբ ել դեռ վերամշակման կարիք են զգում: Աւստի և կուսակցության կենտկոմն ու ԽՍՀՄ ժողկությունն հանձնաժողով նշանակեցին, ընկեր Ժդանովի նախագահությամբ, վորի նպատակն եւ մինչև վերջը հասցնել պատմության դասագրքեր ստեղծելու աշխատանքը: Այդ աշխատանքը, վորքան ել դա ապարուինակ թվա, առավել խոշոր զժվարությունների հանդիպեց ԽՍՀՄ պատմության, քան թե ընդհանուր պատմության բնագավառում: Արժե կանգ առնել այդ զժվարությունների պատճառների վրա, քանի վոր դրանք վերաբերում են վոչ թե հեղինակների մի փոք-

ըաթիվ խմբի, այլ մեր պատմական գիտության վիճակին:

ԽՍՀՄ պատմության ասպարեզում դժվարությունները պետք են վորոնել յերկու բնաւգավառում: Դրանցից մեկն այն են, վոր Ռուսաստանի հին կարգածատիրական բռնժուական պատմությամբ: Մեր պատմաբանները դեռ չեն կարողացել բավարար չափով մշակել Ռուսականացի, Բելոսուսիացի, Անդրկովկասի ու Կենտրոնական Ասիացի ժողովուրդների և ԽՍՀՄ-ում բնակվող մոնղոլական ժողովուրդների պատմությունը: Յերկրորդ դըմքարությունն այն են, վոր սուսաց պատմության բնագավառում գեռ մինչև վերջը կատարված չեն վոչ-բոլշևիկյան տրավիցիաների ջտիչախման այն աշխատանքը, վոր «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին» աշխատառությամբ ընկեր Ստալինի յելույթի ազդեցության տակ կատարվեց ընդհանուր պատմության բնագավառում, աշխատառություն, վորն, ինչպես հայտնի յե-

մեր պատմաբանների առաջ կտրուկ կերպով  
գրեց մեր պատմական գրականության մեջ  
կիսամենշեկիլյան, կիսացենտրիստական գա-  
ղափարները և արոցկիստական կոնտրաբան-  
դը ինկվիդացիայի յենթարկելու հարցը։ ԽՍՀՄ  
պատմության բնագավառում վերացված չեն  
Մ. Ն. Պոկրովսկու դպրոցի ֆլամակար տրա-  
դիցիաները։

Մ. Ն. Պոկրովսկին ձեակերպվել և բուք-  
ժուական ու մանր բուքժուական պատմա-  
բանների սուբյեկտիվիզմի դեմ մղվող պայ-  
քարում, վորոնք թագավորների ու նրանց  
դործողությունների մեջ եյին տեսնում պատ-  
մության գլխավոր շարժիչ ուժը։ Այդ հա-  
յացքներին նա հակադրում էր անտեսական  
հարաբերությունների դարգացումը՝ իբրև  
պատմության հիմնական գործոն։ Բայց դի-  
ալեկտիկական մատերիալիզմը հանդեցնելով  
եկոնոմիզմի, կամ ավելի ճիշտն ասած՝ տըն-  
տեսական ինքնահոսի, նա կարող էր ստեղ-  
ծել մայն սոցիալական ֆորմացանների ուշ-  
խեմա և վոչ թե դոստակարգային պայքարի  
կենդանի պատմություն, պետության՝ իբրև

սպայքարի լծակի՝ հոկայտական դերով։ Ընդ-  
վորում, այդ սխեման պարզեցված եր, նա  
անցումներ ու տեղաշարժեր չեր տեսնում մի  
ֆորմացիայի շրջանակներում։ Բավական ե  
միայն համեմատել Անինի յերկերում ցըված  
դիալեկտիկական ամենաճկուն բնութա-  
գրումները ցարիզմի զարգացման մասին, իբրև  
աղնվական միապետության, վորին քայլ առ  
քայլ քայքայում եր կապիտալիզմը, վորը  
դիջումներ եր անում բուրժուազիային, և  
վորը կործանվեց իբրև աղնվական միապե-  
տություն, — Պոկրովսկու անկենդան սխեմայի  
հետ, վորը ցարիզմի մեջ տեսնում եր առեւ-  
տրական կապիտալի գործիք, հասկանալու  
համար, թե վորքան խորթ ելենինիզմին Պոկ-  
րովսկու սխեման։ Պոկրովսկին մահվանից ա-  
ռաջ գրած իր հոդվածներից մեկում ընդունեց  
իր սխեմայի վոչ գիտական լինելը պաշտ-  
պանվելով միայն այն կշտամբանքից, թե նա  
հակալենինյան եւ Բայց վոչ-գիտական սխե-  
ման չի կարող հակալենինյան չլինել։ Պայքա-  
րը Պոկրովսկու դպրոցի հակալենինյան տրա-  
դիցիաների դեմ ոռւսաց պատմոթյան թե

մեթողի և թե կոնկրետ պատկերի մեջ, և  
Պոկրովսկու դպրոցի արագիցիաների հաղ-  
թահարումը, ԽՍՀՄ մարքսիստական լենին-  
յան պատմության ստեղծման պայմանն են  
հանդիսանում:

Տոլագրելով այն դիտողությունները, վոր  
արել են Կենտրոնական Կոմիտեյի ներկա-  
յացուցիչներն ընկեր Ստալինի գլխավորու-  
թյամբ, դիտողություններ, վորոնք իսկա-  
պես վոչ միայն ցուցումներ են հանդիսանում  
մեր դպրոցական դասազրքերի հեղինակների  
համար, այլև աշխատանքի մի ամբողջ ծրա-  
գիր մեր պատմաբանների համար, մենք  
գտնում ենք, վոր այդ աշխատանքի վրա  
պետք ե զբավել վոչ միայն մեր պատմա-  
բանների, այլև մեր կուսակցական հաստ-  
րակայնության ուշադրությունը: Մի ժամա-  
նակ, ընդհատակում բանվարներ փոքրաթիվ  
խմբեր փորձում ենին մարքսիզմի հիմնադիր-  
ների հանրամատչելի բրոշյուրներով ու յեր-  
կերով յուրացնել պատմական գիտության  
այրուքնը, այն դարձնելու համար բուր-  
ժուտվիայի դիմ, վորը կարողանում եր պատ-


մական առասպելը հիանալի կերպով ոգտազրութել յողովրդական մասսաների դադարական ստրկացման համար։ Խորհրդային պրոլետարիատը, ստեղծելով պրոլետարական հզոր պետություն, բանվորների ու գյուղացիների հարցուք հազարավոր զավակներին հնարավորություն տալով դրադգելու դիտական աշխատանքով, ստեղծեց այնպիսի պայմաններ, վորոնց մեջ Մարքսի ենթելուի-Լենինի պատմական ուսմունքի հիման վրա կարելի յեւ ստեղծել այնպիսի պատմագիտություն, վորն ընդունելում և մտրդկության ամբողջ զարգացումը, վորը խորտակում և կալվածատերերի ու ըուբժուադիայի բոլոր առասպելները և պատմական ճշմարտության զօրեղ սուր և տալիս պրոլետարիատի ձեռքը։

Ստալինը, Մարքսի, Ենդելսի և Լենինի լավագույն աշակերտը, նրանց գործը շարունակողը մեզ ցույց տվեց ինչպես մյուս բոլոր բնառավառներում, այնպես և պատմություն ընադավառում, թե ինչպես շարունակել նրանց աշխատանքը։ Նա ցույց տվեց

մեզ, վոր այդ շարունակումը պահանջում ե  
ամբողջ պատմական նյութին տիրապետել  
Մարքսի, Ենգելսի և Լենինի ուսմունքի վո-  
գով, բուրժուազիայի, մանր բուրժուազիայի  
ու նրանց մենշևիկյան-եսերական-տրոցկիս-  
տական թափթփուկների մեթոդների ու ամ-  
բողջ գաղափարախոսության անողոք քննա-  
դատության վոգով։ Կուսակցությունը, նրա  
կենտրոնական կոմիտեն, ընկեր Ստալինը  
պահանջում են պատմաբաններից, վոր հազ-  
թահարելով նրանց խանդարող տրադիցիա-  
ները, խորթ ազդեցություններն ու ման-  
քախնդրությունը, նրանք ձեռնամուխ լինեն  
աշխատանքի այնպիսի յեռանդով ու այն-  
պիսի թափով, վորով մենք կառուցում ենք  
մեր սոցիալիստական արդյունաբերությունը,  
կոլտնտեսությունները, Կարմիր բանակը։  
Սոցիալիստական մեծ յերկիրը պահանջում  
ե պատմական մեծ դիտություն։

«Պրավդա»-ի առաջնորդողը  
1936 թ. հունվարի 27





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

|  |    |
|--|----|
| Համեկ(բ)կ կե և ԽՍՀ Միության ժկմ վորոշումը                                  | 3  |
| ԽՍՀ Միության ժողկոմխորհում և Համեկ(բ)կ<br>կենտկոմում . . . . .             | 5  |
| Դիտողություններ «ԽՍՀՄ պատմության» դա-<br>սագրքի կոնսալեկտի առթիվ . . . . . | 13 |
| Դիտողություններ «Նոր պատմության» դասա-<br>գրքի կոնսալեկտի մասին . . . . .  | 20 |
| Պատմության դասավանդումը մեր գպրոցում . . .                                 | 28 |

Թարգմ. Մ. Զաքարյան, խմբ. Հ. Դաստիարյան,  
աելսն. խմբ. Ա. Խաչատրյան, սըբագըլէ՝ Վ. Զիղեջյան  
Գլավլիութիւնագոր № 1053, հրատ. № 357,  
սղատ. № 102, տիրաժ 5,000, ինդեքս  $\frac{1}{y}$

Հանձնված եւ արտադրության 9/III 1936 թ.  
ստորագրված եւ տպագրության 1/IV 1936 թ.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հայկուսիրատի տպարան, Յերևան, Ալահվերդյան 27

(156)

362

ЧИСЛ 40 ч.

А №  
7018



НА ФРОНТЕ  
ИСТОРИЧЕСКОЙ  
НАУКИ

Армпартиздат, Эреванъ

Печ.